

րոց կարծիքը փլամարիոն մերժեց: Այս արբանեակս 16օր 16ժ. 21վ. անգամ մի կը խաւարի:

Լուսնթագն Երեւակի ձգողական ազդեցութիւնն ուստի կրէ, կը իւր շարժումն չէ մի օրինակ. զի այս երկուց միոյն յառաջացած ժամանակ միւսն համատարար յետ կը մնայ իւր ընթացից մէջ: Այս տարբերութեանց բարձրագոյն կէտն է՝ Երեւակի համար 49', իսկ Լուսնթագի համար 21' միայն:

Լուսնթագի արբանեակաց առաջ երթալն և ետ մնալն, կարելի՛ է արդեօք Երեւակի նոյն ազդեցութեան արգասիք համարել: Կամ ընդհակառակն, չէ՞ հրնար՝ արբանեակաց իրարու վրայ ըրած ազդեցութեան ընծայել. վասն զի ինչ-


պէս Լուսինն, որ Երկրիս 1749 մասն է, Երկրիս վրայ՝ մասաւորութեան համար ազդեցութիւնն ունի աւելի քան զարեւ առ. 2 համեմատութեամբ, նոյն պատճառաւ և արբանեակք Լուսնթագի անշուշտ կ'ազդեն իրարու վրայ աւելի քան զԵրեւակ: Եթէ յայսմ՝ Երեւակի ազդեցութիւնն նախագաս համարուէր, արբանեակն չեղմունք միայն ի մերձակիտի Երեւակին պիտի տեսնուին. իսկ որովհետև 'ի հեռակիտին ևս կը պատահին նոյն շեղմունք, ուր Երեւակի ազդեցութիւնն իսպառ կը սկարանայ, հաւանական է՝ թէ արբանեակաց փոփոխակի ազդեցութեան արդիւնք են անոնք:

— 3000 —

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐՈՑ

ՐԱՅԿԵԱՆ ՇՐՋԱՆԻ



ինչև ցարդ ժամանակագիրք ջանացեր են օտար ազգաց ժամանակագրութիւնը սուրբ Գրոց ժամանակագրութեան պատշաճեցնել. եղբեր են անշուշտ՝ սուրբ Գրոցն այլ օտարազգւոյն հետ համաձայնեցնողներ. սակայն Հայկայ շրջանին հետ համաձայնեցնել ոչ դը մտածեր է, և այս է մեր նպատակն:

Ըստ Հայկայ շրջանին Ադամէն մինչև 1888 յետ Քրիստոսի՝ 7300 տարի է. որ է ըսել հինգ ամբողջ շրջան՝ 1460 տարիներու գումարին: Ասոնցմէ երեքն կը ձգին Հայկէն մինչև 1888 փրկչական թուականն, որ է 4380 տարի. երկուքն այլ Հայկէն մինչև Ադամ՝ 2920 տարի: Արդ եթէ և սուրբ Գրոց ժամանակագրութիւնն Ադամէն մինչև

փրկչական 1888 թուականն՝ ընէ 7300 տարի, ըսել է՝ թէ սուրբ Գրոց ժամանակագրութիւնն և Հայկայ շրջանն համաձայն կ'ընթանան. որով ժամանակագիրք, այս (Հայկայ) թուականս իբր ուղղիչ կրնան առնուլ. զայս կը մնայ մեզ ապացուցանել:

Հօս հարկ է նախ ակնարկ տալ այլ և այլ ժամանակագրաց թուականաց վրայ: Ինչպէս բազմաթիւ են ժամանակագիրք, սյսպէս ևս Ադամէն մինչև Քրիստոս եղած տարիներու թուոց թուականք բազմաթիւ են, որով հարկ կ'ըլլայ այլ և այլ դասակարգութեանց բաժնել: Առաջինն այն է՝ որ զուտ Եբրայականի վրայ հիմնեալ է. պաշտօպանք այս թուականիս՝ կը համարին, թէ ստեղծումն Ադամայ՝ Քրիստոսէ

առաջ 3947-4058 տարիներու մէջ հանդիպած ըլլայ. որոց գլխաւորք Քուսիւտ, Ալապիդէ, Սկալիդեր, վերջապէս այն ամենքն՝ որ գլուխգատայ քան զայլ թարգմանութիւնս սուրբ Գրոց նախապատիւ կը համարին. ընդ հակառակն այսպէս չըրին, արևելեան Ս. Հարք. Տիեզերական ժողովք. Առաքեալք և նոյն ինքն Քրիստոս, և կը տեսնենք թէ Եբրայականէն աւելի եօթմասնիցն ի գործ ածեալ է:

Երկրորդ թուականն է՝ Եբրայականի և Սամարական օրինակի ունեցածին խառնուրդ մի, զոր Արուսեստ ձրդելոյ զրոշականս անուանեալ գրոց հեղինակք՝ Պոյիրսոն և Կէի՛ գործածեցին. բայց գիտելի է՝ որ Սամարական օրինակն՝ հնգամասեան միայն ունի. և այս Մովսեսի հինգ գիրք հաւանականաբար թարգմանած է ի իւր Սամարացի այն գերեալ քահանայն՝ որ հրամանաւ Սաղմանասարայ եկաւ նրստաւ ի Բեթէլ և լուսաւորեց այն խառնիճազանձ ազգն, զոր Ասորոց արքայն փոխանակ իւրայեկացւոց՝ հօն բնակեցոյց: Պոյիրսոն և Կէի՛ Աղամէն մինչև ջրհեղեղ՝ Եբրայական թուականին կը հետևին, ջրհեղեղէն մինչև ցծնունդ Աբրահամու Սամարեան օրինակին. 430 տարի կը հաշուէն Յակոբայ Եգիպտոս մտնելէն մինչև Ելէն իւրայելի յԵգիպտոսէ: Ասոր վրայ յետոյ կը խօսինք՝ հօս չերկարելու համար: Ուրով ըստ այս թուականին՝ Ագամէն մինչև Քրիստոս 4963 տարի է:

Այս դասակարգութեան մէջ կըրնանք դասել նաև Յովսեպոսինն, որ 4698 տարի կը հաշուէ նոյնչափ միջոցը: Երրորդ դրութիւնն է՝ զուտ եօթմասնիցն, և այն՝ սեղմ կերպով առեալ. հետևողք այս դրութեան կը թուեն արարչութենէ մինչև Քրիստոս 5100-5300 տարիներ, որոց գլխաւորք՝ Եւսեբի և Փիլոն 5198 տարի կը հաշուեն, Աղեքսանդրացին Աթանաս 5280, Յովհաննէս Սարկաւազ 5200 ըստ Տոմա-

րականին (Գրչ. 22. Թ-դ). Ասողիկ, Սիւնեցի, և Անեցի 5276. և զոմանս ՚ի մեր պատմաց աւելի Եւսեբեոյ հակամետ կը տեսնենք:

Չորրորդ դասակարգութեան կը դասեմ՝ Հայկայ շրջանին թուականն, ոչ այլ ինչ պատճառաւ, բայց միայն Աղամէն մինչև Հաւարակաց բռնականն՝ որ Քրիստոսի ծննդենէն իբր վեց տարի վերջ կը սկսի, 5412 տարի թուելուն համար: Այս թուականին կը համաձայնի նաև Պ. Հալլէս որ 5411 տարի կը հաշուէ նոյնչափ միջոց, Գրիգոր վկայասէր՝ և արձանագիր մի կաթողիկէին Անուոյ, և հինգհարիւրեակն (ի տօմարի որ ի Պղ-1411ին գրեալ) կը թուեն 5424 տարի: Անանիա ոմն, ըստ ոմանց Շիրակացի, (որ յամին Ո՛րՁ), 1207 թուին գրուած հին ժամանագրական բանից մէջ 5420 տարի կը թուէ:

Իսկ հինգերորդ այն թուականն է՝ որ 5450-6000 տարի կը գնեն Աղամէն ցՔրիստոս. Եպիփան, Ափրիկանոս (Ան. Շիր.) 5500. Մեծն վարդան՝ առեալ յԱնդրէասայ, ի Խորենացւոյ և յԱնանիայ Շիրակացւոյն կը գումարէ 5504 տարի. անանիա ոմն 5600, Կղեմէս Աղեք. 5624, Նիկեփոր 5700, ըստ Եբրայականի (ի տօմարէ Պղթ) 5737. Եօթմասնիցն ըստ Փեղրոնի 5872. Փիլաստրոս 5801, Որոգենէս և շատերն, 6000՝ յԱղամայ մինչև ի խաչելութիւն Տեսոն:

Այս ժամանակագրական տարբերութիւնք մեզի այս հետևութիւն յառաջ կը բերեն, թէ որչափ ժամանակագիրք հղեր են՝ գրեթէ ամենքն այլ առանձին ժամանակագրութեան մը հետևեր են, զոր իրենք՝ կամ իրենցմէ առաջ մէկը հնարած է ըստ իրենց ըմբռման: Արդ եթէ մէկը ուզենայ ազգի մը ժամանակագրութիւնն համեմատել սուրբ գրոց ժամանակագրութեան հետ, հարիւր տեսակ թուականաց միջէն ո՞րն ընտրէ, որո՞ւն ետևէն երթայ.

մի՛ թէ միջի՛ն հաշուին, մի՛ թէ փոքրագունի՛ն, կամ մեծագունի՛ն. հետեւելով միոյն որուն անուան համբաւէն շացեալ՝ առնու անոր թուականն իբր հիմն, և ազգին ժամանակագրութիւնը այն թուականաւ յարմարցնէ, մի՛ թէ կրնայ ըստիլ՝ թէ նա անխաղ հաշիւ ըրած ըլլայ: Ո՛չ, քանի որ այսպիսի տարբերութիւն կայ ժամանագրական, մինչև չ'որոշուի մին՝ իբր ուղղիչ և ապահով ժամանակագրութիւն, չի կրնար հետեւիլ ըլլալ: Առ այս փնտոննք սուրբ Գրոց ստոյգ ժամանակագրութիւնը, և ապա նայինք թէ որո՞ւն կը համաձայնի այն:

Ա. Ծննդոց գիրքը կը բովանդակէ 3759 տարւոյ պատմութիւն, սկսեալ ի ստեղծմանէ աշխարհի մինչև ցմահ Յովսեփայ, ըստ Եբրայականի կամ ըստ Բռնիւտի 2386 տարի կը համարուի, ըստ Յովսեփոսի և Պոյիբոսնեանց 2958. ըստ Եւսեբի և կամ ըստ մեր սուրբ Գրոց թարգմանութեան նախադրութեանն՝ 3541: Այդ զանազանութեանց պատճառն ի՞նչ է: Ինչպէս ամենուն յայտնի է երեք տեսակ հնգումատեան կը գտուի՝ (այսինքն Մովսէս մարգարէին գրած գրքերն). նախ Եբրայական, ապա Սամարական, և երրորդ Եթովպականից. սասնից համեմատ երեք զանազան թուականներ կ'ունենանք. ապա խառնուրդ մի Եբրայականի և Սամարականի, որ կը կազմէ չորրորդ տեսակ թուական մի ևս, և հինգերորդ մ'այլ յառաջ կուգայ՝ եթէ դասաւորաց միջոցն լայն բռնեմք. բայց ոչ Պաւղոս առաքելոյն մտաց համեմատ:

Ա. Պատձառ զսևազակոտն Բոյն և Հայ Եօթանասնից:

Մեր նախնի թարգմանիչք՝ նախ յԱսորւոց թարգմանեցին սուրբ Գիրքը, ևս ընթեր ունենալով և Եբրայական բնագիրը հաւանականաբար. երբ յամին 435 առաջին թարգմանիչ աշակերտք դարձան առ Ս. Սահակ և Մեսրոպ, հետեւինն բերին և Եթովպ.

նասնից Աստուածաշնչին ստոյգ օրինակ մի, որպէս կը յաւելու պատմիչն (Յորենացին), և կորիւն՝ ձընարիտ օրինակ կոչէ. և սակից կը հետեւի՝ թէ կային և այլ օրինակք՝ որ ընտիր չէին, և կամ ըսել՝ լաւ օրինակուած չէին, որոց մէջ թէրեւ ըլլային սխալ և կամ մալար օրինակութիւնք, որ նոյն ժամանակ կը գտուէր աստ անդ մոլորեալներէ գրուած, որով ընտիրն՝ ստոյգն՝ ճշմարիտն միայն Եկեղեցոյ մէջ պահուած էր. զոր բերին թարգմանիչք հանդերձ կանոնք Եփեսոսի և թըղթի մօլէ կիւրղի՝ Պրոկղի և Ակակիտի: Արդ ինչպէս կ'ըսէ խորենացին (Գիրք Գ. Գ. ԿԱ) « Չոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայայ, դարձեալ թարգմանեցին զմիանգամ թարգմանեալն » իսկ կորիւն (էջ 21) « Հաստատէր (զթարգմանութիւնն) ճշմարիտ օրինակք »: ուրեմն յոգնակի դնելով կը հաստատէ թէ Ասորին և Եբրայականն՝ ընդ Եթովպականից բազմատու թեմաք եղած է, և իւրաքանչիւրն՝ հայուն մէջ իւր մասն ունի, և այս է պատճառ որ մերինն Յունէն կը զանազանի:

Բ. Ի՞նչ զանազանութիւն կայ Յոյն և Հայ Եթովպականից մէջ: Յոյնն 20 տարի պակաս կը դնէ նախալրհեղեղեան հարց թուականը. ըստ Յունին, և ըստ ժամանակագրութեան Եւսեբի 2242 տարի է այն, որում հետեւի և Մ. խորենացին. իսկ ըստ Եպիփանոս, Ալիբիկանոսի և Պետաւիտի ժամանակագրութեանց՝ որ և ըստ Հայ Եթովպականից՝ 2262: Այս քսան տարւոյ զանազանութիւնն կը կայանայ Ղամբայ ծննդեան թուականին մէջ. յոյն եթովպականիցն, Եւսեբի և մերս խորենացին՝ կը դնեն Ղամբայ ծնունդն՝ Մաթուսաղայի 167 երրորդ տարին. իսկ Հայ եթովպականիցն ճշգազոյն քան զայն՝ 187 երրորդին. այս մասն մեր Ս. Գրոց մէջ ըստ Եբրայականին է: Թէ ինչո՞ւ 187 պիտի ըլլայ և ոչ 167, կը պատասխանենք առ այդ, ձեռնարկելով Մա.

Թուսաղային տարիներու թիւէն : Գիտէ՛ս ամենայն զք թէ ամենէն շատ ապրող Մաթուսաղայ եղաւ՝ 969 տարի . և ոչ զք կը տարակուսի թէ ջրհեղեղով մարդ ողջ մնացած ըլլայ բաց ի նոյնիանց , այսինքն՝ Նոյ և իւր կիները , իրենց երեք որդեքը և անոնց կանայքը « ողիք , կ'ըսէ առաքելագետն , իբր ութ » , միւս մնացեալ մարդիկք ամենքն մեռան . արդ եթէ Ղամէք՝ Մաթուսաղայի 167 տարւոյն ծնած համարուի , սոյն անտեղութիւն յառաջ կու գայ թէ Մաթուսաղայ ջրհեղեղէն ողջ մնացած և տասնուչորս տարի յետ ջրհեղեղի ապրած ըլլայ , ինչպէս համարեցան ոմանք հիներէն , և սուրբ Ագոստաինոս կը յիշատակէ Յաղագս քաղաքին Աստուծոյ գրոց մէջ (Գիրք ԺԵ . Գլ . Ժա և Ժգ) և այսպիսի կարծիք ունեցողքը կը մերժէ իբր անընդունելի : Նայինք թէ ինչպէս տասնուչորս տարի յետ ջրհեղեղի կ'ըսուի թէ Մաթուսաղայ ապրած ըլլայ , որոյ պաշտպանք իբր եօթանասնից վրայ հիմնեալ կը համարուին . ահա թէ ինչպէս . 167 տարւոյ էր Մաթուսաղայ երբ զՂամէք ծնաւ 188 տարւոյ էր Ղամէք երբ զՆոյ ծնաւ 600 տարւոյ էր Նոյ՝ երբ ջրհեղեղ եղաւ , որ 955 տարի կ'ընէ ընդ ամենն Մաթուսաղայի ծննդենէն մինչև ջրհեղեղ . իսկ որովհետև նա 969 տարի ապրեցաւ , ըսել է՝ թէ ջրհեղեղէն վերջ տասն և երեք տարի ևս ապրած է , իսկ 14 ըսողք կ'երևի թէ հաշուի մէջ չեն գրած ջրհեղեղն սր մի տարի ամբողջ տեց . ինչ որ այլ ըլլայ , սուրբ Գիրք ջրհեղեղի ժամանակ ողջ մնացողաց մէջ չի դասեր ընդ Նոյեանց և զՄաթուսաղայն : Եթէ Աստուած ողջ ուզենար պահել զնա , ինչո՞ւ Նոյ տապանին մէջ չպիտի առնուր , և կամ արդեօք էնովքայ նման վերուց զնա , և ջրհեղեղէն վերջ դարձեալ աշխարհ զրկեց՝ 13 տարի ևս անծանօթ ապրելու համար . իսկ որովհետև նա՝ ըստ սուրբ Գրոց

չ. յիշատակուիր մեռած՝ յետ ջրհեղեղին ողջ մնացողաց հաշուոցն մէջ , և չկայ յիշատակութիւն թէ զՄաթուսաղայն վերացուցած ըլլայ ի գրախոսն Էնովքայ , այլ ընդ հակառակն կը յիշատակէ թէ 969 տարուան մեռաւ՝ նախ քան ջրհեղեղի յիշատակութիւնն , և ըստ մեր Ս . Գրոց նա վեց տարի ևս առաջ մեռած է : Ահա տակի այս հաշիւը :

187 տարւոյ էր Մաթուսաղայ երբ զՂամէք ծնաւ , 188 տարւոյ էր Ղամէք երբ զՆոյ ծնաւ , և Նոյի 600 երորդ տարւոյն եղաւ ջրհեղեղն , որով ընդ ամենն 975 տարի կ'ընէ Մաթուսաղայի ծննդենէն մինչև ջրհեղեղ . և արդ որովհետև Մաթուսաղայ 969 տարի ապրեցաւ , հետեաբար վեց տարի առաջ վախճանած կըլլայ : Սուրբ Ագոստաինոս Յաղագս քաղաքին Աստուծոյ գրոց մէջ (ԺԵ . գիրք , գլ . Ժգ) կը հաստատէ վեց տարի առաջ մեռնելն Մաթուսաղայի՝ հետևեալ կերպով « Քանզի և յերիս ոմանս յոյն օրինակս , և ի մի լատինական և յայլ մի ասորին համաձայնութեամբ իրերաց գտաւ վախճանել Մաթուսաղայի վեցիւք ամբ յառաջ քան զջրհեղեղ » : Եպիփան՝ որ նախաջրհեղեղեան հարց թուականն 2262 տարի կը գնէ , զնոյն կը հաստատէ , նոյնպէս Ափրիկանոս : Արդ առաջիններուն հակառակ կը հետևի թէ Ղամէք ծնած է Մաթուսաղայի 186 երորդ տարին և ոչ 1674 , որ է 20 տարի յետոյ : Այս քսան տարւոյ տարբերութիւնն յաւելուլ պէտք է Եւսեբիի և հետևողաց պակաս թուած թուականին վրայ , նոքա՝ 2242 կը գնեն , աւելցնելով 20 պակաս տարիներն , կ'ունենանք՝ 2262 տարի Ադամէն մինչև ի ջրհեղեղ ըստ մեր հայ թարգմանութեան Եօթանասից :

Անցնինք միւս խնդրոյն , այսինքն Եբրայականին և Եօթանասնից տարբերութեանց և զանազանութեանց պատճառը տանք , և որոշեմք թէ ո՞ր

Թուականին հետեւելու է և ի՞նչպէս,
այսինքն՝ եթէ մին նախամեծար հա-
մարուի ժամանագրական թուականին
մէջ, մի թէ ամենայն թուածն առանց
խորհրդածութեան՝ ընդունելու է, թէ

երբեմն մտաւոր պարագայից համ-
մատութեամբ ճիշտն փնտուելու է, և
ըսելու պատճառն այս թուականը դը-
նելու և միւս չդնելուն :
Հ. Խ. Ս.

Շարայարեյի

ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՔ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Մեղս եւ դանդաղ իջնէ արեւ,
Ծիկնէ ամպերն լեռան վերեւ,
Եւ գիւտակոր մտնէ յիւր մար,
Ու մըթագմի երկմից կամար:
Յայնժամ մեզ այց ելլեմ զուարթումք,
Մփոփն յ'երկինս շող և աստղումք:
Արեգական վառ խարուկին՝
Կարծես՝ կայծերն նոքա լինին,
Որ յ'աւարտ իւր մեծ շրջանին,
Սլանամ ի՞ բարդ վեր ի՞ յերկին .
Այնտեղ գամուած մնամ խիտ առ խիտ,
Եւ ի՞ մըթամ ունին ժրպիտ:
Իւրաքանչիւրն այլ նոցանից,
Որք մեզ թըլին լուսեղէն բիծ,
Տիեզերք են մեծ, լայնատարր,
Շըլջին յաւերժ ջ'ունին դադար .
Եւ աղմուկովմ իրենց գլորմամ,
Երգ յօրինեն սուրբ ամսահմամ:
Ովսաննա երգք, փառք եւ պատիւ,
Աշխարհմբերից, յ'ոգեաց ամթիւ,
Առ Տէրն Աստուած, որ իւր ի՞ շուրջ՝
Ժողվէ զ'ոգիս սուրբ աչալուրջ,
Եւ որք իբրեւ մի ճառագայթ,
Բարկք տեղամ՝ ձեռքք անյայտ:
Աստուած է լոկ լիակատար
Միրող, բարի, ուրիշ չ'արդար,
Երեսն է շինջ լոյս արփեմի՝
Ատտեղազարդ համդերծ ունի,
Եւ մեր կենաց սիրէ ի՞ մուլթ,
Որորմութիւն շողալ և գութ:
Հաւատք եւ Յոյս, եւ Սէր նորան,
Մեր հոգւոց մէջ իբր ի՞ խորան,
Ո՛հ, թող համզլին միշտ պատասպար,
Նոքա տամ մեզ իւր գաղափար .

Յայսկոյս մեցուկ վշտաց ծոցում,
Յայսկոյս շիրմին, խինդ եւ ցընծում:
Թէ իմ կենաց եւս արեգակ,
Աւարտէ փոյթ իւր շըրջանակ,
Հոգիս ի՞ քեզ ճեռն Արարչիդ,
Կամի սլանալ մաքուր վընդիտ .
Յայնժամ՝ արդեօք քեզ սիրափար,
Պիտ՝ առնո՛ւս ինձ ոգեաց ի՞ պար:
Կարողամամ պիտի արդեօք,
Տեսնել ըզքեզ ըզմայլամօք,
Միմչըռու ի՞ կեանս միշտ աստանօր՝
Որոմեցի գքեզ ամմուր .
Միմչ յ'արտօսր իմ ակնախըսիդ,
Գըտայ սիրոյդ քոյ շառաւիղ:
Դու որ մըլլումն անգամ յ'երկիր,
Լըցիր խնամօք միշտ կարեկիր,
Ծիծուռն յ'այերս՝ կ'լուին ի՞ հով,
Կեանք տուիր՝ թոխ, քոյդ իսկ ըոցով,
Ես որ ըզքեզ իմ մէջս ըզգամ,
Պիտի կորչիմ՝ զիմչ անզգամ:
Ես չեմ անբան, խելք սէր ունիմ,
Եւ Սէրս դու ես . ով Աստուած իմ,
Միրովդ ես եւս, Աստուածամման,
Ընդ քեզ ի՞ ծոց քոյ միանամ .
Ջի միշտ նըմամն սիրէ զիւր նման,
Եւ իւր ըրծիցն հասնչ լըման:
Գիտեմ որ այս աշխարհս է բով,
Ուր ի՞ փորձանս զըտուիմք հոգով .
Ցարք եւ աղէտք, թիւր տառապանք,
Թող տամ մարմնոյս մահու պատանք .
Բաւ է հոգիս սիրէ ըզքեզ,
Վշտերն ամցիմ նրագի պէս:

Պ. Հ. ԱՌԱՄԵՆԱՆ